

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑԻ
ԾՆՆԴՅԱՆ 155-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ԵԶԱԿԻ ԲՅՈՒՋԱՆԴԱԳԵՏՆ ՈՒ ՀԱՅԱԳԵՏԸ.
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑ*

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Բանալի բառեր՝ Ադոնց, Մառ, բյուզանդագետ, հայագետ, Ուրարտու, Տիգրան Մեծ, Մակեդոնյան հարսություն, Պետերբուրգ, Գևորգյան ճեմարան, Դիոնիսիոս Թրակացի, հայ դպր:

Ամփոփում

Նիկողայոս Ադոնցը (1871–1942) անկրկնելի դեմք է բյուզանդագիտության, հայագիտության, պատմագիտության, բանասիրության, մանկավարժության բնագավառում: Նա թե՛ հոր և թե՛ մոր կողմից ունեցել է ազնվական ծագում: Օրբելյան իշխանական տան ու Դավիթ Բեկի խիզախ զինակից Տեր-Ավետիքի շառավիղը ծնվել էր, ինչպես ինքն էր հաջատուր Աբովյանի մասին ասում, Աստծու նշանը ճակատին ու երազանքը հոգում:

Ն. Ադոնցն իր ժամանակի համար ստացել է փայլուն կրթություն: Հավասարապես գրում և խոսում էր գրաբարով, արևելահայերենով ու արևմտահայերենով: Նրա համար գրոց լեզուներ էին ռուսերենը, ֆրանսերենը, անգլերենը, գերմաներենը: Նա հմուտ ուրարտագետ էր, ասորագետ, բյուզանդագետ: Սովորել է Սանկտ Պետերբուրգի համալսարանի երկու ֆակուլտետներում՝ ստանալով ոսկե պարգևանշան: Հայ մեծագույն բարերար Ալեքսանդր Մանթաշյանցի հովանավորությամբ երկու տարուց ավելի սովորել և պարապել է Եվրոպայի նշանավոր քաղաքների՝ Լոնդոնի, Փարիզի, Մյունխենի, Ստրասբուրգի, Վիեննայի, Վենետիկի համալսարաններում և մատենադարաններում, լսել հռչակավոր գիտնականներ Կառլ Կրումբախերի, Անտուան Մեյեի, Հայնրիխ Հյուբշմանի և ուրիշ հայագետների դասախոսությունները: Երկար տարիներ համագործակցել է համաշխարհային հռչակի տեր հայագետ, արևելագետ, կովկասագետ և լեզվաբան Նիկողայոս Մառի հետ, որը նրա գիտական ղեկավարն էր ու պաշտելի ուսուցիչը: Ադոնցի՝ տարբեր լեզուներով գրված գիտական, հրապարակախոսական հոդվածները լույս են տեսել մեծաթիվ ռուսական, հայկական պարբերականներում:

* Ներկայացվել է 18. V. 2026 թ., գրախոսվել է 21. V. 2026 թ., ընդունվել է տպագրության 18. VI. 2026 թ.:

© Հեղինակ/ներ, 2026: Հասանելի է Creative Commons Attribution 4.0 Licence-ին համապատասխան:

Ադոնցն իր կյանքը նվիրել է գիտությանն ու հայրենիքը օտարներին նոր լույսով ներկայացնելու սրբազան գործին: Նա Խաչատուր Աբովյանի հոգեզավակն էր և նվիրումով, գիտական ճշգրտությամբ ներկայացնում էր, թե որքան կարևոր դեմք է եղել Տիգրան Մեծը, ինչպիսի հզոր դեր են կատարել Բյուզանդիայի Մակեդոնյան հարստության հայ արքաները՝ 200 տարվա ընթացքում Բյուզանդիան դարձնելով քաղաքակրթության ու գիտության ջահակիրը աշխարհում:



Երևանում նրա անունով կա փողոց, Սիսիան քաղաքում կանգնեցված է մեծատաղանդ քանդակագործ, նույնպես Սիսիանի ծնունդ Արտաշես Հովսեփյանի կերտած Ադոնցի հրաշալի արձանը:

Հայ միջնադարից սկսած, երբ առանձին անհատի մասին գիրք էր գրվում, ապա դրա առաջնային նպատակներն էին՝ հավերժացնել այդ լուսավոր մարդու կերպարը և նրա օրինակով դաստիարակել նոր սերունդին:

Ադոնցը նրանցից մեկն է:

Նախաբան

Կան գիտնականներ, որոնց գիտական ժառանգությունը կարևոր է ոչ միայն իր ապրած ժամանակի համար, այլև հիմնարար է և շարունակում է կենսական լինել նաև հետագա ժամանակներում: Այդպիսին է Նիկողայոս Ադոնցի գիտական ողջ ժառանգությունը, որը ստեղծված է մի շարք լեզուներով՝ հայերեն, գերմաներեն, ֆրանսերեն, անգլերեն, ռուսերեն:

Իր գիտական առաջին քայլերից գիտնականը ձեռնարկել է և հաջողությամբ իրականացրել այնպիսի թեմաների հետազոտություններ, որոնք մինչև իրեն ոչ ոք չէր իրականացրել: Այդպիսիք են հատկապես նրա երեք կոթողային աշխատությունները՝ ա) «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում», բ) «Արուեստ Դիոնիսեայ Քերականի եւ հայ մեկնությունը նորին», գ) «Քննական պատմություն Հայոց»:

Այժմ գիտնականների սեղանին են դրված Ադոնցի գիտական ժառանգության ութ ստվար հատորները, որոնց տպագրությունն իրականացրել է Երևանի պետական համալսարանի հրատարակչությունը՝ «Գալուստ Կիվպենկեան հիմնարկության» հովանավորությամբ: Հատորները հրատարակության է պատրաստել պատմաբան Պետրոս Հովհաննիսյանը:

Ադոնցի գիտական աշխատությունները բյուզանդագիտության, ուրարտագիտության, հայագիտության, հայ գրականության տարբեր շրջանների, մոդերնիզմի ուղղությունների, լեզվաբանության տեսության մի շարք խնդիրներում և այլ բնագավառներում բերում են բազմաթիվ նորություններ: Նա համարձակ ընդդիմախոսում է սիրողական մակարդակի գրված աշխատությունների հեղինակներին: Հետևելով իր ուսուցչին՝ Նիկողայոս Մառին՝ Ադոնցը կարևորը համարում է փաստը:

Նրա բյուզանդագիտական հետազոտությունների շնորհիվ՝ հայտնի դարձավ Բյուզանդիան շուրջ երկու դար կառավարած հայկական ծագում ունեցող Մակեդոնական հարստության մեծագույն նպաստը՝ երկրի տնտեսության, մշակույթի և

աշխարհի քաղաքական կյանքում ունեցած եզակի դերով: Խորհրդային նշանավոր պատմաբան, հնագետ, արևելագետ, գրող, թարգմանիչ, փիլիսոփա Լև Գումիլովն իր պատրաստած հանրագիտարանում գրել է, թե Մակեդոնյան հարստությունը իր սահմանները տարածեց Եփրատից մինչև Դանուբ, բարձրացրեց Կոստանդնուպոլսի տնտեսությունը և մշակույթը, ու նրա փառքը տարածեց ողջ աշխարհի վրա¹:

Հետագոտելով անտիկ պատմիչների գործերը՝ Ադոնցը պատմականորեն ճշգրիտ ներկայացրեց Տիգրան Մեծի դերը նրա ապրած ժամանակաշրջանի աշխարհի քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքում: Դրա հիման վրա ֆրանսիական ակադեմիայի անդամ Ռընե Գրուսեն Ադոնցի՝ ֆրանսերենով լույս տեսած «Քննական պատմություն Հայոց» երկի առաջաբանում գրում է. «Տիգրանը իր ժողովրդի ապրելու իրավունքն ապահովեց հավիտենականության համար»²: Նույն հայագետը սպառիչ ձևով է բնութագրում Ադոնց գիտնականին. «... որպես ի ծնե լեզվաբան, որը տիրապետում էր գիտելիքների մի ամբողջ ստեղծանշարի՝ սանսկրիտից ու պահլավերենից սկսած մինչև սեպագիրը, բյուզանդական հունարենից մինչև ժամանակակից պարսկերենը: Նա միաժամանակ հնագետ, պատմաբան և բանասեր էր, ուստի և նրա ամենափոքր ծանոթագրությունն իսկ գիտական նշանակություն ունի»³:

Ադոնցի անունն առկա է հայերենով տպագրված բազմաքանակ հանրագիտարաններում:

Ադոնցի կյանքը

Նիկողայոս Ադոնցի դիմանկարը՝ որպես գիտնականի, դասախոս-մանկավարժի, հայրենասերի, օրինակելի տղամարդու, անմոռաց ներկայացրել է Մուշեղ Իշխանը⁴, որը երկու տարի՝ 1938–1940 թթ., եղել է նրա ուսանողը Բյուրաքանի համալսարանում:

Նշանավոր գիտնականը ծնվել է 1871 թ. հունվարի 10-ին Սյունիքի մարզի Բոնակոթ գյուղում՝ քահանայի ընտանիքում: Հայրը՝ Գևորգը, սերում էր ազնվական ծագում ունեցող Տեր-Ավետիքյան տոհմից: «Դավիթ Բեկ և Տեր-Ավետիքի սերունդը» ուշագրավ հոդվածում Ադոնցը խոսում է հայրական տոհմի ծագման մասին: Այն սերում էր Դավիթ Բեկի քաջ զինակից Տեր Ավետիքից. «Դավիթ Բեկի զինակիցների մեջ Տեր Ավետիք քահանան կարևոր տեղ ունի: Նրա քաջասրտության է պարտ Ջևու բերդի առումը, Դավթի ամենեն նշանավոր հաղթությունը»⁵:

¹ Гумилев. 2017, 153.

² Ադոնց. 2009, 29:

³ Ադոնց. 2009, 25:

⁴ Իշխան. 1952:

⁵ Ադոնց. 2006, հ. Ա, 550: Դավիթ Բեկի պատմությունը մեզ է ավանդել Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Ղուկաս Սեբաստացին՝ ըստ Դավիթ Բեկի զինակից Ստեփանոս Շահումյանի թելադրած նյութի: Դավիթ Բեկի հերոսական մարտերի մասնակիցն ու ականատեսը Տեր-Ավետիսի մասին վկայում է. «Այլև Տեր-Ավետիսը նույն Հալիձորում էր 468 հոգով, այս Տեր-Ավետիսը բազում

Ադոնցի մայրը Դանա Ռոստոմբեկյանն էր, որը շառավիղն էր XIII–XIV դարերում Սյունիքի տեր դարձած Օրբելյան իշխանների: Լոնդոնի Բրիտանական թանգարանում պահվող թիվ 118 հայկական ձեռագրում առկա է պատմիչ Ստեփանոս Օրբելյանի հոր՝ Տարասայի՝ Օրբելյանի հիշատակարանը, որում երևում է, թե վերջինս ինչպես է կարողացել բանակցել թաթարների հետ և Տաթևի ու մյուս վանքերի գյուղերն ազատել հարկերից: Այդ նպատակով նա իր սեփական մի շարք գյուղեր նվիրել է վանքին՝ իրենց դաշտերով, այգիներով, բնակիչներով⁶:

Տեղին է փաստել, թե Ադոնցը ինչպես է գնահատել XII–XIII դարերում հայ մի շարք իշխանական տների հայրենասիրական գործունեությունը: «Զաքարյանների շրջանում և նրանց շնորհիվ երևան են գալիս մի քանի իշխանական գերդաստաններ, որոնք հաջողում են խոհուն քաղաքականությամբ մեղմել ահարկու բռնակալության թափերը և ստեղծել տանելի պայմաններ խաղաղ աշխատանքի համար: Պոռշյան, Օրբելյան, Դովյան, Զալալյան, Վաչուտյան և այլ տոհմերը լուսաշող աստղեր են հայ մթին երկնականարում, որ առաջնորդում են աշխարհաշեն և մտային ուժերը»⁷:

Գենետիկ առումով Ադոնցը սերում էր հայ ժողովրդի առաջադեմ և իմաստուն ուժերից: Նրա կրթությունը սկզբում ընթացել է Տաթևի վանքում, ուր մանուկ Նիկոլայն⁸ աչքի է ընկել ուսումնաստեղությամբ: Նրա ուսման տարիներին Տաթևի վանքում եղել են ֆրանսերենին տիրապետող մի քանի հայ հոգևորականներ⁹:

Տաթևի վանքից հետո Ադոնցը կրթությունը (1878–1891) շարունակում է Գևորգյան ճեմարանում: Այստեղ հիշում էին, որ վանքի դպրոցում սովորել է հայ մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանը, որը հետո ուսումը շարունակել էր Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, այնտեղից էլ վերադարձել Էջմիածնի վանք՝ վարժ տիրապետելով ռուսերենին ու ֆրանսերենին:

մեծ սխրանքներ գործեց, ինչպես Պատմության մեջ է երևում. շատ քաջ էր ու արիասիրտ, և խոսքով հույժ զորավոր, և՛ գործով, և սրա համար, երբ նա հեռանալով հայրենի երկրից պանդխտեց Երուսաղեմում, շատերը նրա հայրենի գավառից հորդորում էին վերադառնալ իրենց մոտ և պաշտպան կանգնել երկրին: Բայց նա հրաժարվում էր՝ քահանայական կարգի պատվին» (Ս ե բ ա ս տ ա գ ի. 1988, 42):

⁶ Conybeare. 1913, 294–295.

⁷ Ադոնց. 2006, հ. Բ, 496:

⁸ Այդպես են նրան կոչել հարազատները ծննդավայր Բռնակոթում:

⁹ Ի դեպ, ֆրանսուհի տիկին B. Chantre (Շանթր) XI դարի 90-ականներին այցելել է Տաթևի վանք և 1893-ին Փարիզում տպագրված իր ծավալուն ուղեգրության մեջ մանրամասն ու հիացմունքով խոսում է վանքից ստացած տպավորությունների և գեղեցիկ հյուրընկալության մասին: Նա վկայում է, թե Տաթևի վանքում են պահված Աստվածամոր մազերից մի փունջ, Հիսուսի խաչից մի կտոր, նաև առաքյալների մասունքներից (Chantre. 1893, 110):

Ուսման ծառավը Ադոնցին տանում է հայաշատ ու հայախոս Թիֆլիս քաղաք, ուր 1892-ին ընդունվում է Թիֆլիսի ռուսական գիմնազիան՝ Տեր-Ավետիքյան ազգանունով: Այդ ազգանունով նա սովորել է և՛ Տաթևի վանքի դպրոցում, և՛ Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: Սակայն, քանի որ Թիֆլիսում ուժեղ էր ռուսական ազդեցությունը, գիմնազիայում նրա Տեր-Ավետիքյան ազգանունը ռուսական ձևով դարձնում են Տեր-Ավետիքով:

Հայրենասեր տղայի ականջին խորթ էր հնչում իր ազգանվան ռուսականացումը, և նա դիմում է գիմնազիայի տեսուչին, որն ազգությամբ չեխ էր՝ Դրբորգլավ ազգանունով: Նա հեռու էր ռուսամոլությունից և տղային ասում է.

«– Մի՛ տրտնջա, հնազանդվիր դպրոցական կարգերին:

– Բայց ինձ համար խորթ է ազգանվանս փոփոխությունը, – համառում է տղան:

– Ավարտելիս մի բան կմտածենք, կգաս, ես քեզ կասեմ, թե ինչ անես, որ ազգանունդ լինի հայկական»:

Չեխ տեսուչը պահել է իր խոստումը, նա խորհուրդ է տվել դիմել Երևանի կոնսիստորիա, որ հաստատեն, թե Տեր-Ավետիքյանը նույն Ադոնցն է: Եվ ավարտական վկայականում Տեր-Ավետիքովի փոխարեն գրվել է՝ Նիկողայոս Ադոնց:

Թիֆլիսի ռուսական գիմնազիայում ստացած գիտելիքներն ու գնահատականները հիմք են դառնում, որ Նիկողայոսն ուսումը շարունակեր Սանկտ Պետերբուրգի հռչակավոր համալսարանում ու դառնար նրա պանծալի սաներից մեկը: 1895-ին ընդունվում է համալսարանի միանգամից երկու ֆակուլտետ՝ արևելյան լեզուների ու պատմաբանասիրական: Փայլուն գիտելիքները հիմք են դառնում, որ ազգային բարերար Ալեքսանդր Մանթաշյանցի հովանավորությամբ երկու տարով մեկնի Եվրոպայի նշանավոր կրթական կենտրոններ՝ Լոնդոն, Փարիզ, Մյունխեն, Ստարսբուրգ, Վենետիկ, Վիեննա՝ ուսման մեջ կատարելագործվելու¹⁰: Այդ հարցում Ադոնցին օգնել է պատմաբան, բանասեր, բարերար Կարապետ Եզյանը, որը ցարական Ռուսաստանի պաշտոնյա էր, որոշիչ դիրք ուներ այդ երկրի ներքին գործերի ու լուսավորության նախարարություններում:

Պետերբուրգյան ուսման տարիներին Ադոնցը ջերմ կապերի մեջ է եղել նշանավոր լեզվաբան, հնագետ, հայագետ, կովկասագետ, թարգմանիչ Նիկողայոս Մառի հետ ու երկար տարիներ նամակագրական կապի մեջ էր իր ուսուցչի հետ: Բարերախտաբար, ճանաչողական մեծ արժեք ունեցող այդ նամակները հասել են մեզ և տպագրված են¹¹:

1904 թ. Ադոնցն արդեն աշխատում և ստեղծագործում էր Պետերբուրգում և ոգևորված խմբագրում «Բանբեր գրականության և արվեստի» հանդեսը:

Գիտնականը չի ողջունել խորհրդային կարգերը և 1920 թ. թողել է Պետերբուրգը ու մեկնել Լոնդոն, որտեղից անմիջապես տեղափոխվել է Փա-

¹⁰ Դոլուխանյան. 2022, 151:

¹¹ Ադոնց. 2014:

րիզ: 1931 թ. մինչև իր մահը ղեկավարել է հատուկ իր համար բացված Բյուսեյի համալսարանի հայագիտական ամբիոնը, որը ղեկավարել է մինչև կյանքի վերջը՝ 1942-ի հունվարի 27-ը:

Ադոնցը եռանդուն գիտնական էր, պրպտող հնագետ: 1917-ին մասնակցել է Վանի երկրորդ հնագիտական արշավախմբին, ուղքով ու ձիով շրջել Արևելյան ու Արևմտյան Հայաստանի պատմական բազմաթիվ վայրերում, վերջին անգամ իր ծննդավայր Բոնակոթում եղել է 1916-ին: Մասնակցել է նաև Ն. Մառի գլխավորած Անիի հնագիտական պեղումներին:

Թե՛ Փարիզում և թե՛ Բյուսեյում Ադոնցն ապրել է բարեկեցիկ կյանքով, և թյուր է այն կարծիքը, թե նա ապրել է նյութական ծանր պայմաններում¹²: Ինչպես վկայում են Ավետիք Իսահակյանն ու Մուշեղ Իշխանը, նա թե՛ Փարիզում և թե՛ Բյուսեյում ապրել է բարեկեցության մեջ: Այսպես՝ 1926-ի փետրվարի 25-ին Իսահակյանը Փարիզից՝ Սոֆյա Իսահակյանին գրած նամակում վկայում է, թե ինչ ծանր վիճակում են ապրում հայտնի հայ վտարանդիները Փարիզում. դրա կողքին ավելացնում է. «Լավ տուն ունի Ադոնցը, Ծառուրյանը, Տեր-Օհանյանը ...»¹³: Մուշեղ Իշխանը նշում է, թե որքան մողայիկ ու շքեղ էր հազնվում Ադոնցը: Նա երկու տարի ուսանել է Ադոնցի մոտ և իր հուշերում պատմում է, թե համալսարանում այն կարծիքը կար, թե Ադոնցը Բյուսեյի համալսարանի դասախոսներին «կտանի ջուրը ու ծարավ հետ կբերի»: Ադոնցն իմացել է արժեքավորել իրեն ու իր ազգը օտարների առջև. «Նա հայ տղամարդ էր՝ բառի ավանդական, արդիական և ազնվական իմաստով»¹⁴:

Թե՛ Իսահակյանը և թե՛ Մուշեղ Իշխանը վկայում են, որ գիտնականը շատ է սիրել իր գեղեցիկ, զարգացած, շատ երիտասարդ վաղամեռիկ կնոջը:

Ադոնցի կոթողային աշխատությունները

Բյուզանդագիտության և հայագիտության համար շատ արժեքավոր են հատկապես գիտնականի երեք կոթողային աշխատությունները: Դրանցից առաջինը նրա մագիստրոսական թեզն է՝ «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում»: Այն 1908-ին լույս է տեսել Պետերբուրգում՝ ռուսերենով, իսկ հետագայում թարգմանվել է ֆրանսերեն, անգլերեն ու հայերեն:

Հուստինիանոսի դարաշրջանն անցումնային կարևոր սահմանաբաժանում է հռոմեական ու բյուզանդական պետությունների միջև և նշանավորում է անտիկ ժամանակահատվածից դեպի քրիստոնեական միջնադար տեղափոխվելը: Հուստինիանոսի (կայսր՝ 527–565) ժամանակաշրջանն աչքի է ընկնում Բյուզանդական կայսրության տարածքների ընդարձակմամբ: Նրա օրերում Կոստանդնուպոլսում կառուցվել է Սուրբ Սոֆիայի հոյաշեն տաճարը: 989 թ. Սուրբ Սոֆիայի գմբեթը երկրաշարժի հետևանքով քանդվել է, և այն առավել գեղեցիկ ձևով վերաշինել է հայ ճարտարապետության փառքերից մեկը՝ Տրդատ ճարտարապետը, որը ստեղծագործել է X դարի երկրորդ կեսից մինչև

¹² Ադոնցյան մտածումներ. 2024, 15:

¹³ Ի ս ա հ ա կ յ ա ն. 2021, 154:

¹⁴ Դ ո լ ո խ ա ն յ ա ն. 2022, 100:

XI դարի սկիզբը: Նա Անիի Մայր տաճարի և այժմ Հայաստանի Հանրապետությունում գտնվող մի շարք հոյակերտ (օր.՝ Հաղպատի Ս. Նշան եկեղեցին) տաճարների հեղինակն է¹⁵:

Հուստինիանոսը բացեց Բյուզանդիայի պատմության մի նոր շրջան: Նա զարգացրեց ոչ միայն կայսրության հզորությունը, այլև գիտություններն ու դպրությունը: Բյուզանդական կայսրությունը միատարր չէր, չկար էթնիկ որևէ խմբի գերադասումը մյուսից: Կայսրության կազմում ապրող ժողովուրդներն ուներին իրենց ինքնատիպ, ազգային դիմագիծը:

Գրքում Ադոնցը քննում է ոչ միայն Արևմտահայաստանի քաղաքական, իրավական, տնտեսական, հոգևոր կյանքը, այլև Արևելահայաստանի, որը մտնում էր Պարսկաստան պետության մեջ: Ապշեցուցիչ են իմացական այն ծավալները, որին ծանոթանում է ընթերցողը գիրքը կարդալիս: Չնայած հեղինակը ներկայացնում է կատարյալ մի գործ, սակայն այն չի համարում անթերի, որովհետև բողոքում է անհրաժեշտ աղբյուրների պակասությունից: Ադոնցը նշում է, որ Հուստինիանոսը Փոքր Հայքը բաժանեց 4 մասի՝ I Հայք, II Հայք, III Հայք, IV Հայք: Բոլոր քաղաքական բաժանումներն անվանեց Հայք, որովհետև այնտեղ ապրող բնակչության մեծամասնությունը հայեր էին:

Գալով իշխանության՝ Հուստինիանոսը ձգտեց ստեղծել կենտրոնացված ուժեղ իշխանություն. նրա երկարատև թագավորությունն ուղեկցվել է Արևմուտքում ու Արևելքում շարունակական պատերազմներով:

Մինչև Հուստինիանոսը երկրի ներքին կյանքը կազմալուծված էր, ու շահագործվող ժողովուրդը շարունակ ապստամբություններ էր բարձրացնում: Այդ ապստամբությունները կարող էին փլուզել կայսրությունը: 535-ին լույս տեսավ մի եզակի նովելլա (ընդունված օրենքի վրա ավելացված նոր հավելված), որում կայսրն անկեղծորեն մերկացնում էր երկրի ներքին կյանքում տեղ գտած խոցելի երևույթները: Նա հայտարարում էր ի լուր ամենքի. «Դրամասիրությունը մայրն է բոլոր չարիքների»: Արձանագրում էր կայսրության պաշտոնյաների դրամաշորթությունն ու կաշառակերությունը: Այդ աղետալի երևույթներն առաջացրել էին համատարած դժգոհություններ, որոնց հետևանքով տուժում էր նաև պետական գանձարանը: Պաշտոնյաները չէին ստանում անհրաժեշտ ռոճիկ և դիմում էին խարդախ միջոցների: Կայսրը փորձեց կարգավորել պաշտոնյաներին տրվող ռոճիկը:

Ադոնցի գիրքը մեծարժեք է նաև նրանով, որ այն մանրամասնորեն ներկայացնում է Արևելյան Հայաստանի VI դարի կյանքը, երբ Հայաստանը պարսկական տիրապետությանը ենթակա մարզպանական երկիր էր: Առանձին գլուխներ է նվիրում նախարարությունների տարածքային վերլուծությանը, նախարարների ու հոգևոր իշխանության փոխհարաբերություններին: Նախարարական տներից բացի՝ հայագետը հստակ ներկայացնում է Արևելյան Հայաստանի հոգևոր իշխանապետներին՝ իրենց եպիսկոպոսական թեմերով:

Գրքում կան փաստեր, որոնք վկայում են հայ նախարարների հավատարիմ լինելն ազգային եկեղեցուն՝ այն քաջ գիտակցությամբ, թե եկեղեցին ազգային

¹⁵ Դոլուխանյան. 2022, 126–127:

ինքնուրույնության մեծագույն հիմնաքարերից մեկն է: Անգամ Արևելյան Հայաստանից պարսիկներից հալածական Արևմտյան Հայաստան տեղափոխված նախարարները հրաժարվում էին իրենց արված առաջարկից՝ անցնել հունական հավատին ու հավատարիմ էին մնում ազգային եկեղեցուն¹⁶:

Ադոնցի «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» աշխատությունը լրացնում է բյուզանդագիտության մեջ եղած կարևորագույն բացը և մշտապես հետաքրքրելու է Բյուզանդիայի պատմության Հուստինիանոսի դարաշրջանը ուսումնասիրողներին:

Գիտնականի երկրորդ կոթողային աշխատությունը «Արուեստ Դիոնիսեայ Քերականի եւ հայ մեկնութիւնք նորին» գիրքն է, որը լույս է տեսել 1915-ին և Ադոնցի դոկտորական ատենախոսությունն է: Այս աշխատությունը նորություն էր հայագիտության, նաև համընդհանուր քերականական մտքի զարգացումն ուսումնասիրելու առումով: Ադոնցն իր աշխատությանը կցել է «Նախաբան», հարուստ ծանոթագրություններ: Հին հունարենից թարգմանել է Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արվեստ» աշխատությունը և հայկական ձեռագիր մատյաններից դուրս բերել ու հրատարակել Թրակացու քերականության հայ մեկնիչների գործերը՝ հարուստ ձևով դրանք ծանոթագրելով:

Իր ներածական խոսքում Ադոնցը բացատրում է, թե հայ միջնադարի մեկնիչներն ինչպես էին հասկանում ձևաբանության ու շարահյուսության կանոնները: Ըստ դրա էլ բացատրվում է, թե որն է շեշտը, ինչ է հագներգությունը, ինչ է կետը, ինչ է տառը, որն է վանկը, որը՝ բառը: Առանձնացված քննվում են խոսքի մասերը, գոյականը, բայը՝ նրա խոնարհումը, դերբայը, դերանունը, մակբայը, շաղկապը:

VII դարից սկսած՝ հայ քերականներն իրենց մեկնություններով ամփոփում են քերականական ու փիլիսոփայական մտքի ճոխությունը, որը տեղի էր ունեցել նախորդ VI դարում, երբ Հայաստանում ձևավորվեց հունաբան դպրոցի հարուստ ավանդույթը՝ հունարենից կատարված բազում թարգմանություններով:

Անտիկ աշխարհում հումանիտար գիտությունները միահյուսված էին փիլիսոփայությանն ու քերականությանը: Այդ գիտակցումը դեռ այսօր սովորույթի ուժ ունի և գիտության մեջ առաջնակարգ զարգացում ունեցող այնպիսի երկրում, ինչպիսին է ԱՄՆ-ը՝ իր հիանալի մասնավոր համալսարաններով, հումանիտար գիտաճյուղերի գծով պաշտպանած մարդկանց գիտական աստիճանը կոչում է PhD, այսինքն՝ լեզվաբանը, իրավաբանը, գրականագետը, սոցիոլոգը, քաղաքագետը, փիլիսոփան, պատմաբանը հավասարապես, եթե դոկտորական ատենախոսություն են պաշտպանել, և այդ աստիճանը նրանց շնորհվել է, կոչվում են փիլիսոփայության դոկտոր:

Իր ուսումնասիրության մեջ Ադոնցը նախ գետեղել է Դիոնիսիոս Թրակացու քերականության բնագրի թարգմանությունը՝ նույն էջի վրա դնելով նաև հունարեն բնագիրը, ապա անցել է հայ մեկնիչների տարբեր ձեռագրերից հանված բնագրերին:

¹⁶ Դ ռ լ ո լ ի ս ա ն յ ա ն. 2022, 136, 137:

Առաջին բնագիրը, որն առկա է գրքում, Դավիթ Քերականի մեկնությունն է, որը, ըստ Ադոնցի, երկար ժամանակ վերագրվել է V դարավերջի և VI դարասկզբի մեծագույն հայ փիլիսոփա Դավիթ Անհաղթին: Սակայն իրականում Դավիթ Անհաղթն ու Դավիթ Քերականը լիովին տարբեր անձիք են, և այդ հարցը ճշգրտել է Ադոնցը:

Ադոնցի գրքում որոշ քերականական երևույթներ բացատրված են մատչելի գրաբարով: Օրինակ՝

ողբերգութիւն – ընդ ողբսն գլուսոյ նուագսն խառնեալ,
կատակերգութիւն – զկատականացն նուագել խաւսս,
դիւցազնաբար – որպէս դիւցազանց վայելէ,
դամբանական – գերեզմանական¹⁷:

Ուսումնասիրության մեջ ըստ ձեռագրական տվյալների ներկայացված են Դավիթ Քերականի, Անանուն Մեկնիչի, Մովսես Քերդողի, Ստեփանոս Սյունեցու, Գրիգոր Մագիստրոսի, Համամ Արևելցու մեկնությունները. իսկական գանձ էր լեզվաբանների համար:

Ներկայացված բնագրերն ունեն նաև գրաքննադատական ու գրականագիտական արժեք հին Հայաստանում նման գիտաճյուղերի զարգացման ընթացքը պատկերացնելու առումով¹⁸:

Դիոնիսիոս Թրակացու քերականության մեկնիչների բնագրերի տպագրումը հետազայում լայնորեն օգտագործվեցին լեզվաբանների ու գրականագետների կողմից:

Ադոնցի կարապի երգը դարձավ 1946-ին Փարիզում ֆրանսերենով հետմահու հրատարակված «Քննական պատմություն Հայոց» աշխատության առաջին հատորը: «Երեք մեծ հայեր» հուշագրության մեջ Մուշեղ Իշխանը վկայում է, թե Ադոնցը այս աշխատությունը համարում էր իր լավագույն գործը, որի 4 հատորների շնորհիվ կկարողանար աշխարհին ներկայացնել հայ ժողովրդի ամբողջական ու ճշմարիտ պատմությունը: Սակայն սաստկացած հիվանդությունը, Երկրորդ համաշխարհային պատերազմը վերջակետ դրին նրա կյանքին: Ականատեսները, որոնցից մեկն էր Հ. Էսեկույանը, վկայում են, որ Ադոնցը կյանքից հեռացել է գրիչը ձեռքին, նման այն քաջ ու վեհ զորավարին, որը, ծանր վիրավոր, մինչև վերջին շունչը կովում է թշնամու դեմ¹⁹:

Գրքի առաջաբանը գրել է ֆրանսիական ակադեմիայի անդամ Ռենե Գրուսեն: Նա հիացած է Ադոնցի գիտական մտքի հզորությամբ ու ճշգրտությամբ, որի շնորհիվ ապացուցվեց, թե Ուրարտուն նույն Հայաստանն է. «Բայց ահա, դեռևս Քրիստոսի ծննդից առաջ IX դարում, Նաիրյան իշխանությունների մեջ ուժեղ ձգտում առաջացավ մի միություն կազմելու, և Արգաշկունի ու Բիաինայի մեր Մանազկերտի ու Վանի շուրջը կազմվեց Ուրարտուն: Դեռ ավելին, Ուրարտուի առաջին թագավորը, որի անունը հասել է մեզ, հենց այն Արամեն է, որը

¹⁷ Ադոնց, 2008, 57:

¹⁸ Դոլուխանյան, 2009, 21–25:

¹⁹ Դոլուխանյան, 2009, 137:

դարերի անջրպետի և ցեղերի միջով կարողացել է դառնալ հայ ազգի հերոսական էպոսիմը»²⁰:

Հենվելով միջազգային հնագիտական հետազոտությունների վրա՝ Ադոնցը հաստատում է, թե մարդկության պատմության մեջ մեծ հեղաշրջում առաջացրած երկաթի գյուտը պատկանում է հայերին. «Ժ. դը Մորգանը Չինաստանն ընդունում է որպես բրոնզի հայրենիք: Այնտեղից է Հայաստան հասել բրոնզի հետ ծանոթությունը: Բրոնզե դարը Հայաստանում երկար չի տևել և իր տեղը զիջել է երկաթե դարին: Ֆրանսիացի գիտնականը այս մետաղի գյուտի պատիվը վերագրում է Հայաստանին: Նա գտնում է, որ Միջագետքը հանքեր չունեի, ուստի և երկաթը ներմուծում էր Հայաստանից: Ո՛չ Ասորեստանը, ո՛չ Եգիպտոսը չէին կարող երկաթ հայթայթել, քանի որ նրանք նույնպես չունեն այդ մետաղը»²¹:

Գրքում բավականին էջեր նվիրված են գիտնականի կողմից ուրարտական արձանագրությունների վերծանված օրինակներին, որը մեծ հմտությամբ կատարել է Ադոնցը²²:

«Քննական պատմություն Հայոց» աշխատության առաջին հատորի վերջում կցված են նյութեր, որոնք տեղ պետք է գտնեին հայագետի «Քննական պատմություն Հայոց» գրքի II և III հատորներում: Դրանց մեջ կան հետևյալ շատ կարևոր հետազոտությունները՝

1. «Արևելքը և Հայաստանը Մակեդոնյան կայսրության օրոք»²³,
2. «Արտաշես I-ը և հայկական հողերի միավորումը»²⁴,
3. «Հայաստանը Տիգրան II Մեծի գահակալության ժամանակաշրջանում»²⁵:

Տիգրան Մեծը եղել է Ադոնցի իդեալ քաղաքական գործիչը, որն աչքի է ընկել հայրենասիրությամբ, խիզախությամբ ու դիվանագիտական մեծ վարպետությամբ: Նա հիացած է Տիգրան Մեծի կերպարով ճիշտ այնպես, ինչպես Մովսես Խորենացին հիացած էր Տիգրան Երվանդյանով:

Գիտնականը շատ է ափսոսում, որ Տիգրանի մասին փաստեր չեն հասել հայկական աղբյուրներից: Հիշենք, որ հայկական մեհենական գրականությունը հիմնովին ոչնչացվեց քրիստոնեության մուտքի ժամանակ՝ թողնելով միայն բանավոր հին վեպը, որից, բարեբախտաբար, որոշ հատվածներ իր «Հայոց պատմության» մեջ զետեղել է Խորենացին:

Տիգրան Մեծի մասին եղած հունահռոմեական աղբյուրներն իր հետազոտության մեջ Ադոնցը լայնորեն շրջանառում է: Դրանք հաճախ ի նպաստ Տիգրանի չէին և շարադրված էին հօգուտ Հռոմի ու նրա զորավարների՝ հատկապես Լուկոլլոսի և Պոմպեոսի: Ադոնցը գրում է. «Երբ Լուկոլլոսը Տիգրանին ներկայացնում է իբրև շքեղություն սիրող փառասերի, գոռոզի, ժլատի և

²⁰ Ադոնց. 2009, 27:

²¹ Ադոնց. 2009, 39:

²² Ադոնց. 2009, 180–214:

²³ Ադոնց. 2009, 431–445:

²⁴ Ադոնց. 2009, 445–456:

²⁵ Ադոնց. 2009, 256–509:

եսասերի՝ նա հանձին Տիգրանի տեսել և ուրվագծել է իր դիմապատկերը»²⁶: Տեղին է նույնությամբ մեջբերել Ադոնցի բնորոշումը՝ տրված Տիգրան Մեծին և նրա որդի Արտավազդին. «Պետք է արդյոք հիշեցնել Տիգրանի որդի Արտավազդի հպարտ դիրքորոշման մասին Կլեոպատրա VII-ի հանդեպ՝ համոզվելու համար, որ Տիգրանն իր որդուն դաստիարակել էր այլ կերպ, այլ ոգով, քան այն, ինչը պատմիչները վերագրում են իրեն: Մենք կարծում ենք, որ հարկ է անվստահությամբ վերաբերել նման գեղազարդային տեսարաններին»²⁷:

Հետազոտության տարբեր հատվածներում ներկայացվում են Տիգրան Մեծի և Միհրդատ Պոնտացու փոխհարաբերությունները, Տիգրանի խիզախության մի քանի դրվագներ:

Հատկապես պատմիչ Պլուտարքոսը Տիգրանին վերաբերող մի շարք փաստեր թաքցրել է: Այսպես՝ Լուկուլլոսի կողմից Տիգրանակերտը պաշարելու ժամանակ Տիգրան արքայի կանայք ու գանձերը եղել են Տիգրանակերտում: Տիգրանը 6000 զինվորից բաղկացած մի գունդ ուղարկել է Տիգրանակերտ: Նրանք ճեղքել են պաշարումը, արագորեն վերցրել կանանց ու գանձերը և վերադարձել Տիգրանի մոտ:

Պլուտարքոսը, որ այնքան ջանքեր էր թափել Տիգրան Մեծին նսեմացնելու, իր շարադրանքի վերջում անսպասելի խոստովանում է, թե ի դեմս Տիգրանի Լուկուլլոսը բազմաթիվ մարտերից հետո հանդիպել էր «վսեմ քաջությամբ օժտված թշնամու»²⁸:

Ադոնցի կենդանության օրոք Տիգրան Մեծի անունը մտել է օտարերկրյա անգամ փոքր ծավալի հանրագիտարաններ՝ որպես Հռոմին դիմադրած Հայոց արքայի²⁹: Նույն ձևով հանրագիտարաններ էր մտել նաև Մովսես Խորենացու անունը՝ որպես հայերի Հերոդոտոս³⁰: 1950 թ. այդ անուններն այլևս չկան օտարալեզու հանրագիտարաններում: Աշխարհի նշանավոր թանգարաններում կան Տիգրան Մեծի ոսկե և արծաթե դրամները³¹:

Ադոնցի գիտական հետազոտությունների բազմազանությունը

Երիտասարդ գիտնական Ադոնցը, որը Գևորգյան ճեմարանում սովորելիս գրաբարով կարդացել էր հայ պատմիչների գործերը, փորձում է նոր լույս

²⁶ Ա դ ո ն ց. 2009, 495:

²⁷ Ա դ ո ն ց. 2009, 503:

²⁸ Ա դ ո ն ց. 2009, 509:

²⁹ Nouveau Petit Larousse illustré. 1932, 1711.

³⁰ Nouveau Petit Larousse illustré. 1932, 1543.

³¹ Դրանք տեսել եմ Լոնդոնի Բրիտանական թանգարանում, Բոստոնի Fine Art-ում, Վոթերթաունի հայկական աշխարհահռչակ թանգարանում, Բաքու քաղաքի թանգարանում և այլուր: Բաքվում այն տեսել եմ 1963 թ. աշնանը՝ Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի պատմալեզվագրական ֆակուլտետի ուսանողների հետ: Թանգարանի բացատրող կինը ցույց տվեց Տիգրան Մեծի պատկերով արծաթե դրամը՝ ասելով. «Սա Աղվանքի, այսինքն՝ Ադրբեջանի արքա Տիգրան Մեծի արծաթե դրամն է»: Երբ զարմացած ասացինք, որ Տիգրանը եղել է Հայաստանի թագավորը, էքսկուրսավար կինը շարունակեց ցուցափայտը և հեռացավ: Մեր արժեքների նենգափոխումը, ցավոք, նոր չէ:

սփռել Վասակ Սյունեցու կերպարի վրա: Այդ նպատակով գրում է «Մարգարան Վասակը պատմաբանների դատաստանի առաջ» հոդվածը: 1904-ին Ս. Պետերբուրգում գիտնականը փորձում է Վասակի անվան վրայից ջնջել դարերով ընդունված հայրենադավի խարանը: Նա նշում է, թե Ավարայրի դեպքերը նկարագրող պատմիչները՝ Եղիշեն ու Ղազարը, վայելում էին Մամիկոնյանների հովանավորությունը և նրանց հանձնարարությամբ գրեցին իրենց երկերը³²: Ադոնցը հիշեցնում է, թե որքան բարձր է գնահատել Վասակ Սյունեցուն Կորյուն վարդապետն իր «Վարք Մաշտոցի» աշխատության մեջ:

Հայագետը իր հոդվածում առավելապես հենվում է Ղազար Փարպեցու հաղորդած փաստերի վրա, որից երևում է, թե ապստամբության ձեռնարկողը հենց Վասակն է եղել, որը օգնության նամակներ է հղել Հունաց կայսերը, Անատոլիայի սպարապետին, հոների առաջնորդ Հեռանին, Վրաստան, Ադվանք, Արևմտյան Հայաստանի՝ Բյուզանդական կայսրության մեջ մտած նահանգները՝ Ծոփք, Աղձնիք: Սակայն ոչ մեկը դիմումներին չի պատասխանել: Այդ պահից էլ Վասակը հետ է կանգնել ապստամբելուց: Եղիշեն չի գրում, թե Հազկերտ Երկրորդը Տիգրանում պատանդ պահեց Վասակի երկու որդիներին. «Բայց զբղեջսն Վրաց Աշուշայ և զերկու որդիս իշխանին Սինեաց Վասակայ, զԲաբիկ և զԱրտնետեսի, ոչ արձակեաց թագաւորն պարսից Յազկերտ ընդ այլ նախարարացն Հայոց»³³: Եղիշեն, ըստ Ադոնցի, միտումնավոր սևացնում է Վասակին՝ չմոռանալով նշել, թե նա ուզում էր վերականգնել Հայոց թագավորությունը³⁴:

Իհարկե, Ադոնցի՝ Վասակին արդարացնելն ընդունելություն չգտավ³⁵, և Վարդանը մնաց որպես ազգային ինքնուրույնության ուղեցույց:

Հազար անգամ իրավացի է Մորուս Հասրաթյանը, երբ գրում է. «Եվ այդ սրբազան ոգորման օրը՝ Ավարայրի ճակատամարտը, թերևս ավելի մեծ դեր խաղաց հայոց պատմության, հայ ժողովրդի ինքնաճանաչման և արժանապատվության զգացումը մշտապես արթուն պահելու տեսակետից, քան Վասակի ծրագրած հաղթանակը կտար այդ»³⁶:

Ադոնցը հոդվածներ ունի հայոց հին աշխարհայացքի և հայոց հին աստվածների մասին՝ հատկապես Տորք Անգեղի: Մանուկ Աբեղյանը, որ շատ խնդիրներում վկայակոչում է Ադոնցի տեսակետները, անդրադարձել է նաև Տորքի մասին նրա հայտնած տեսակետներին³⁷:

Խիստ ուշագրավ հետազոտություն է «Բագրատունյաց փառքը» խորագիրը կրող հոդվածը՝ գրված վերջնական տեսքով Բրյուսելում 1930-ականների վերջերին, որը ներկայացնում է Բագրատունիների հայկական տան շառավիղները Վրաստանում, Ադվանքում, Արցախում³⁸:

³² Ադոնց. 2006, հ. Ա, 186:

³³ Փարպեցի. 1982, 128:

³⁴ Եղիշեն. 1989, 282:

³⁵ Մկրտչյան. 1968, 424:

³⁶ Հասրաթյան. 1985, 74:

³⁷ Աբեղյան. 1968, 38:

³⁸ Ադոնց. 2006, 439–534:

Անգլիացի հայագետ Շառլ Դաուսեթը իր «Սայաթ-Նովա. XVIII դարի տրուբադուր» գրքում (1997) նկատում է, թե Վրաստանի արքա Հերակլ Երկրորդը հատուկ ջերմ վերաբերմունք ուներ հայ Սայաթ-Նովայի նկատմամբ, որովհետև գիտեր, որ իր թագավորական ընտանիքը սերում է հայ Բագրատունիներից: Միաժամանակ նա նշում է, թե Բագրատունիների թագավորական գերդաստանը աշխարհում եզակի է իր երկարակեցությամբ: Այդ միտքը տեսնում ենք նախ Ադոնցի մոտ. «Հազվագյուտ են պատմության մեջ այնպիսի իշխանական տներ, որպիսիք են Բագրատունիք, հազվագյուտ Արևելքում, թե Արևմուտքում: Տոհմն է բազմադարյան, աշխարհաշեն և աշխարհակալ և փայլեց իր հանճարով հատկապես արաբական շրջանում»³⁹:

Ադոնցը ««Դավիթ Բեկ» վեպի պատմական հիմքը և գաղափարախոսական արժեքը» ծավալուն հոդվածում քննական մոտեցում է ցուցաբերում Րաֆֆու «Դավիթ Բեկ» վեպի պատմական դեպքերի նկարագրության նկատմամբ: Նրա կարծիքով Րաֆֆուն հաջողվել է կերտել իսկական զորավար հայրենասերի կերպար: Հայագետը հոդվածը գրել է Բրյուսելում՝ 1937-ին: Սակայն այդ հոդվածի ավարտի հատվածն ուղղված է հանուր հայությանը՝ բոլոր ժամանակներում: Այն իմաստուն պատվիրան է, որը ոչ միայն պետք է հիշի սովորական հայը, այլև հատկապես այն հայերը, որոնք ստանում են մի ամբողջ ազգ առաջնորդելու ու ղեկավարելու առաքելությունը: Տեղին է Ադոնցի պատգամը մեջբերել նույնությամբ. «Մենք կովազան չենք և զենք էլ չունենք կովելու: Բայց սովորենք զոնե զինավարժություն, ծանոթանանք ժամանակակից ահավոր զենքերին, զինվորագրվենք և ոչ թե խուսափենք օտար շարքերում: Օգտվենք պատեհությունից, խոհուն ճակատով և համր բերանով: Ոչ ոք չգիտե, անցքերի թավալվոր անիվը ու՞ր է տանում: Պատրաստ և զգաստ լինենք, որպեսզի չկորչենք անփառունակ՝ կովողների ոտքի տակ կոխան»⁴⁰:

«Խաչատուր Աբովյանի վախճանը» հոդվածում՝ գրված 1933-ի ամռանը Բրյուսելում, Ադոնցը չի ընդունում Ակսել Բակունցի այն վարկածը, թե իբրև Աբովյանը 1848-ին անհայտացել է ֆրանսիական հեղափոխությանը մասնակցելու նպատակով: Նա համոզված է, որ Աբովյանն իր կարճ կյանքում հասցրեց թողնել այնպիսի պատգամներ, որոնք ազգապահպանման հիմքեր են: Այս հոդվածում Ադոնցն ունի Աբովյանի անձի բացառիկ բնութագրական. «Աբովյան այն անձերից էր, որ աշխարհ են գալիս խորհուրդը ճակատին և երազները հոգում»⁴¹:

Ադոնցը և նորացող գրականությունը

Գրականագիտական բացառիկ դրույթներ կան Ադոնցի «Պեշիկթաշլյան և կցորդ խնդիրներ» հոդվածում, որը գրվել է 1931-ին, Փարիզում:

1928 թ. դեկտեմբերին Փարիզում մի խումբ մտավորականներ, որոնց թվում Ադոնցը և Լևոն Շանթը, հիմնում են «Հայ գրական ակումբ» խումբը, որի նախագահ է ընտրվում Ադոնցը: Սա նշանակում է, որ ժամանակակից հայ

³⁹ Dowsett. 1997, 450.

⁴⁰ Ադոնց. 2006, հ. Բ, 529:

⁴¹ Ադոնց. 2006, հ. Բ, 536:

գրականությունը և գրականագիտությունը ևս եղել են Ադոնցի ուշադրության կենտրոնում:

Երիցս իրավացի է Ադոնցը, երբ բնութագրում է հայ միջնադարյան գրականության ողջ ընթացքը: Տեղին է նրա միտքը բերել նույնությամբ. «Չնայելով հայ պատմական կյանքի խեցբեկ վիճակին՝ մեր գրականությունը պահել է որոշ չափի կանոնավորություն կամ հաջորդականություն իր զարգացման ընթացքին: Կարելի է ասել, եվրոպականին համընթաց է: Ունի հին շրջան, միջին տաղասացիկ շրջան, կեղծ-դասականություն և ռոմանտիզմ»⁴²:

Մեծարժեք է 1903-ին գրված «Գրական նշմարներ, դեկադանս և սիմբոլիզմ» հոդվածը: Մի քանի տարիներ ապրելով արտասահմանում և մոտիկից շփվելով Եվրոպայի քաղաքակիրթ երկրների գրական կյանքի նորամուտ հոսանքներին՝ Ադոնցն այս հոդվածում ներկայացնում է գրականագիտական իր նոր ընկալումները, որոնք այսօր էլ չեն կորցրել իրենց արժեքը:

Հոդվածը սկսվում է XIX դարի բանաստեղծ Ժերար դը Ներվալից (1808–1855) բերված բնաբանով, որում կան սիմվոլիզմի դրսևորումներ.

*Մութ գոյի մեջ հաճախ Աստված կա քողարկված,
Եվ ծնվող աչքերը փակվող կոպի հանգույն
Քարի կեղևի տակ Մաքուր Միտքն է ծագում:*

Ադոնցը հոդվածում ներկայացնում է, թե գրական նոր հոսանքները ֆրանսիական գրականության մեջ հանդես են գալիս տասնիններորդ դարի վերջին երկու տասնամյակում և սկսում են տարածում ստանալ⁴³: Հայագետը շատ տեղին ներկայացնում է Անատոլ Ֆրանսի նուրբ նկատումը, որը հետևյալն է. «Նորերի վերա դառնությամբ խոսող հները մի կարգ ծերունիների տպավորություն են թողնում, որոնց թվում է, թե այն օրվանից, երբ իրենք թողել են երիտասարդությունը, կանայք այլևս առաջվա պես գեղեցիկ չեն, ուստի պաշտումի և մեծարանքի ամբողջ գանձը պահում են իրենց ժամանակվա մատաղ աղջիկների համար»⁴⁴:

Ադոնցը, համենայնդեպս, դեկադենտների արվեստը անկումային չի համարում, որովհետև այն երիտասարդները, որոնք հիմնեցին այդ շարժումը, տաղանդավոր մարդիկ էին, և նրանց գեղագիտական ձիրքերը վեր են ամեն կասկածից:

Բյուզանդական հոդվածներ

Հարուստ է Ադոնցի բյուզանդագիտական ժառանգությունը: Այն երկճյուղ գիտական ու ճանաչողական արժեք ունի: Ներկայացնում է Բյուզանդիայի պատմության կարևորագույն իրադարձությունները և այդ պատմության նշանավոր դեմքերին, որոնք ազգությամբ հայեր են եղել:

⁴² Ադոնց. 2006, հ. Բ, 545:

⁴³ Ադոնց. 2006, հ. Բ, 567:

⁴⁴ Ադոնց. 2006, հ. Բ, 568:

«Հայ գիտական դեմքեր Բյուզանդիայում» ծավալուն հոդվածը Ադոնցը գրել է 1930-ին: Նրա կարծիքով հայերի գերիշխանությունը Բյուզանդիայի արքունիքում սկսվում է ոչ թե Վասիլ Մակեդոնացուց, այլ Լևոն V Հայկազն կայսրից, այսինքն՝ IX դարի սկզբից: Դա Մամիկոնյանների նախարարական տան վերելքի շրջանն էր: Այդ շրջանում Վարդ Մամիկոնյանը դարձավ Բյուզանդիայի գիտության մեկենասը: Նա պետական հովանավորությամբ Բյուզանդիայում բացեց առաջին համալսարանը՝ Մագնավրա պալատում: Նորաբաց համալսարանը գլխավորեց Լևոն Մեծ փիլիսոփան, որն ազգությամբ հայ էր: Լևոնը փիլիսոփայությունից բացի ուսումնասիրել էր ուրիշ արտաքին գիտություններ, ինչպես, օրինակ, աստղաբաշխություն, թվաբանություն, երկրաչափություն, երաժշտություն: Բնությունից օժտված լինելով մեծ ընդունակությամբ՝ նա զօրուգիշեր աշխատում էր իր գիտելիքների վրա: Ապրում էր աղքատ տնակում և ընդունում էր ամեն մարդու, ով ցանկություն ուներ սովորելու⁴⁵:

Լևոնի բացառիկ լինելը Ադոնցը բացատրում է հետևյալ ձևով. «Լևոնը բյուզանդահայ էր, ծնված ու մեծացած մայրաքաղաքի մթնոլորտում:

Իր ձգտումներով, ուսումնատենչ ոգով, կարելի է ասել, տեղական պտուղ է: Սակայն մոռանալու չէ, որ նրա պապն էր Բագրատ աստղաբաշխը, որ իր գիտությունը պարտական չէր բյուզանդական մայրաքաղաքին, այլ իր հետ բերել էր իր հայրենիքից՝ Հայաստանից: Իրավունք ունենք ենթադրելու, որ նրա արյունը խոսում էր որոշ չափով և Լևոնի մեջ: Խոսքս միայն ժառանգության մասին չէ, այլ ընտանեկան ավանդության»⁴⁶:

Ադոնցն ապացուցում է, որ աշխարհում ընդունված մաթեմատիկական հնագույն գիտելիքների հեղինակ ճանաչված Արտավազդն ազգությամբ հայ է եղել ու օգտվել է Շիրակացու թվաբանական գրքից⁴⁷:

««Դիգենիս Ակրիտաս» դյուցազնավեպի պատմական հիմքը» հոդվածում գիտնականն ապացուցում է վիպերգի հայկական ծագում ունենալը⁴⁸: «Վասիլ Դիգենիս Ակրիտաս» էպիկական պոեմը հունարենից հայերեն է թարգմանել քաջահմուտ բյուզանդագետ Հրաչ Բարթիկյանը 1978-ին՝ իր թարգմանությանը կցելով արժեքավոր մեկնություններ ու ծանոթագրություններ: Նա էլ, շարունակելով Ադոնցի բացահայտումները էպիկական պոեմի ծագման մասին, փաստում է, թե «Դիգենիս Ակրիտասը» ծնունդ է առել Արևմտյան Հայաստանում, երբ այդ երկրամասի բնակչությունը գերազանցապես հայեր էին⁴⁹:

Ադոնցի «Նամականին»

Շատ ճիշտ են կողմնորոշվել Ադոնցի երկերի հատորներ կազմողները, որ առանձնացված ներկայացրել են գիտնականի՝ ճանաչողական մեծ արժեք ունեցող «Նամականին»: Այդ նամակները սկսվում են 1893-ից և հասնում 1940 թվականը:

⁴⁵ Ադոնց. 2012, հ. Ե, 52:

⁴⁶ Ադոնց. 2012, հ. Ե, 76:

⁴⁷ Ադոնց. 2012, հ. Ե, 79, 80:

⁴⁸ Ադոնց. 2012, հ. Ե, 98:

⁴⁹ Վասիլ Դիգենիս Ակրիտաս. 1978, 186:

Ադոնցի «Նամականու» մեջ բազում են նամակները՝ ուղղված Ն. Մառին, Ն. Ակինյանին, Գ. Հովսեփյանին, Թ. Գուշակյանին, Կ. Զարյանին և ուրիշների, որոնցում շարադրված դրույթները ելակետային են ու այսօր էլ կարևոր են լեզվաբանների, գրականագետների, քաղաքական գործիչների, պատմաբանների և ընդհանրապես գիտությամբ զբաղվող մարդկանց համար:

Ադոնցը բազմաթիվ նամակներ է գրել Եվրոպայի նշանավոր պարբերականներին, դեսպաններին: 1918-ին նա հեռագիր է ուղարկել Գերմանիայի կառավարությանը, որում ասվում է. «Օգտվելով ռուսական բանակի նահանջից՝ թուրքական զորքերն անմիջապես ներխուժեցին անպաշտպան երկիրը, ընդ որում՝ նրանք բնաջնջեցին ոչ միայն թուրքահայերին, որոնցով ճանաչվում էր ամբողջ Կովկասի ինքնորոշման իրավունքը, թուրքական զորքը շարժվեց դեպի Կարս ու Արդահան՝ ամայացնելով երկիրը, և ոչնչացնելով քրիստոնյա բնակչությանը»⁵⁰:

1920 թ. նոյեմբերին Լոնդոնի «Թայմս» թերթի խմբագրին ուղղված զայրալից նամակում Ադոնցն անողորմ երկացնում է Եվրոպայի երկրների կեղծ բարեկամական վերաբերմունքը դեպի հայերը, որն իրականում նպաստում է թուրքերի նոր բարբարոսություններին: Նա հավատում է, որ հայերը հույսը չեն դնի Եվրոպայի վրա. «Գուցե այնժամ նրանք մեկընդմիջտ կշրջվեն Եվրոպայից տառապալից համոզմամբ, որ մարդկային արժանիքներից լավագույնը՝ խիղճը, այնտեղ անհույս խլացել է»⁵¹:

Հատկապես ուշագրավ են Ն. Մառին ուղղված նամակները: Մառը վախճանվել է 1934-ի դեկտեմբերի 20-ի գիշերը, երբ Ադոնցը սգում էր սիրելի կնոջ մահը: Համենայնդեպս նա իր մեջ ուժ է գտնում և գրում է մի հոգեցունց հիշատակի խոսք՝ ուղղված սիրելի ուսուցչին:

Մառն անսահման նվիրված է եղել հայ ժողովրդին և հայագիտությանը: Նա, ըստ հայագետ Ֆրեդերիկ Կոնիբերի, զգուշացնում էր, որ հայերն ընդհանրապես հույս չդնեն անգլիացի քաղաքագետների վրա, նրանք ոչինչ պիտի չանեն հայերի համար. խաբեբաներ են⁵²: Հրաշալի ծանոթ լինելով իր ժամանակի հայագետներին՝ Ադոնցն առանձնացնում է Մառին. «Օտար հայագետներից և ոչ մեկը, հարկավ, այնպես չգիտեր հայ լեզուն և հայոց անցյալը որպես Մառը: Նա գիտեր հայոց լեզուն կատարելապես՝ իր բարբառներով: Նրա հայասիրությունը անսահման էր և աներեր: Բազմաթիվ առիթներ եմ ունեցել համոզվելու դրանում»⁵³:

Ադոնցն ու հայ եկեղեցին

Ն. Ադոնցի գիտական ժառանգության ամենատարբեր գործերում տեսնում ենք խորքային անդրադարձ հայ քրիստոնեական եկեղեցու գործունեությանը՝ սկսած Գրիգոր Լուսավորչից մինչև XX դարի 30-ական թվականները:

Հայ եկեղեցու դերի բացառիկ կարևորությունն ընդգծված է «Քննական տեղեկագիր պրոֆ. Ն. Ադոնցի» հոդվածում՝ գրված 1936-ին Բրյուսելում, որը նվիրված է Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանի «Հոգևոր կեդրոններ և Գլաճորի

⁵⁰ Ադոնց. 2014, հ. է (Նամականի), 89:

⁵¹ Ադոնց. 2014, հ. է (Նամականի), 93–94:

⁵² Ակադեմիկոս Նիկողայոս Մառ. 2005, 149:

⁵³ Ակադեմիկոս Նիկողայոս Մառ. 2005, 149:

բարձր դարոցը» աշխատությանը: Այս հոդվածը Գարեգին Հովսեփյանի գրքին նվիրված դրվատանքի խոսք է: Նրանում նկարագրված է, թե Առաջավոր Ասիա և Հայաստան ներխուժում են Ասիայի հեռուներից եկած նոր ու բարբարոս ցեղեր: Նրանց հեղեղը, սակայն, ի զորու չէր հայ հոգևոր կյանքը սպանել. «Հայ հեզ աշխատասիրությունը, շինարար ոգին և արթուն միտքը շարունակել են փայլփլել զանազան կենտրոններում, ինչպես մշտավառ ճրագներ, և հավետ կենսունակության ապացույցներ տվել քաղաքակրթական նորանոր ճիգերով և ստեղծագործությամբ»⁵⁴: Այդ հոգևոր նորանոր ճիգերի արդյունքը ներկայացված է հոդվածում: Զաքարյանների շնորհիվ քաղաքական ասպարեզում ազդեցություն ստացած իշխանական հայ տոհմերը սկսում են հովանավորել վանքերին ու եկեղեցիներին:

Հայագիտության մեջ շատ ճշգրտումներ է կատարել Ադոնցը. դրանցից մեկը վերաբերում է Մլքե թագուհու պատվիրած հռչակավոր Ավետարանին, որը որպես իսկական զարդ պահպանվում է Վենետիկի Մխիթարյան միաբանության Մատենադարանում: Ըստ Ադոնցի ճշգրտման՝ Ավետարանը գրվել է 862 թվականին⁵⁵: Հոդվածը կոչվում է «Մլքեի Ավետարանի գրության տարին» և գրվել է 1936-ին Բոլոսեղում:

«Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարանը ծավալուն հոդված է նվիրել Ադոնցին, որում նշում է գիտնականի մեծ ծառայությունները հայ եկեղեցու բազմաթիվ խնդիրները լուսաբանելու կարևոր խնդրում⁵⁶:

Ադոնցը սերտ կապերի մեջ էր Վենետիկի, Վիեննայի, Էջմիածնի հոգևոր միաբանությունների հետ: Նա տեղյակ էր Մաթյուռեն Լակրոզի՝ հայ եկեղեցուն նվիրված աշխատությանը, որում վերջինս հայերեն Աստվածաշնչի թարգմանությունը համարում է լավագույնը⁵⁷:

Խորապես ծանոթ լինելով հայ ժողովրդի դարավոր պատմական ուղուն՝ Ադոնցը շեշտում է, թե պետք է թոթափել էժանագին ազատամտության հրապույրը: Պետք է ուժեղ դիմադրություն ցույց տալ բոլոր նրանց, որոնք հոշոտում են մեր ազգային միությունը որևէ կողմից, որևէ մտքով: Նա շեշտում է. «Մեր ժողովրդի գիտակցության մեջ ազգն ու կրոնը ոչ միայն տարբեր չեն, այլև սերտիվ կապված են»: Կրոնը հայի համար շաղկապող օղակ է, և երբեք այդ ճշմարտությունը չպետք է անտեսել⁵⁸:

Ադոնցը հոդվածներ ունի նվիրված Եզնիկ Կողբացուն, Մաշտոցին ու նրա աշակերտներին, Փավստոս Բուզանդին, Մովսես Խորենացուն, պարսկական էպոս «Շահ-Նամեին», Աշոտ Երկաթին և բազում այլ թեմաների:

Տեղին է հիշել Մուշեղ Իշխանի խոսքերը՝ ասված մեծ գիտնականի ու մանկավարժի մասին. «Ադոնց այն հայն էր, որ ամենէն ավելի իրատեսք ուէր Հայաստանի հողին մեջ հանգչեցնելու իր ոսկորները, որոնք, վստահ եմ, հանգիստ չունին օտար հողի ցուրտ գրկին խորը:

⁵⁴ Դոլուխանյան. 2022, 110–111:

⁵⁵ Ադոնց. 2006, հ. Բ, 489:

⁵⁶ Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան. 2002, 18:

⁵⁷ Lacroze. 1739, 333.

⁵⁸ Նիկողայոս Ադոնցը միջազգային ճանաչում ունեցող բյուզանդագետ և հայագետ. 2021, 17:

Ադոնցի տեղը Հայաստանի Պանթեոնն է, անմահներու հանգստարանի մեջ»⁵⁹:

Եզրակացություն

Նիկողայոս Ադոնցը միջազգային հռչակ ունեցող բյուզանդագետ է ու հայագետ: Նա հիանալի կրթություն է ստացել Տաթևի վանքում, Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, Թիֆլիսում, Պետերբուրգի համալսարանում, որն ավարտել է ոսկե պարգևանշանով: 1899–1901 թթ. գիտական գործուղումով Ալեքսանդր Մանթաշյանցի միջոցներով մեկնել է Եվրոպա, վերապատրաստվել Լոնդոնի, Փարիզի, Մյունխենի, Ստրասբուրգի, Վենետիկի, Վիեննայի համալսարաններում, մատենադարաններում ու գրադարաններում: Լսել է այնպիսի հռչակավոր գիտնականների դասախոսությունները, ինչպիսիք են Կառլ Կրումբախերը, Անտուան Մեյեն, Հայնրիխ Հյուբշմանը և ուրիշներ: Նրա համար գրոց լեզուներ էին գրաբարը, արևմտահայերենն ու արևելահայերենը, ռուսերենը, ֆրանսերենը, անգլերենը, գերմաներենը: Տիրապետում էր սանսկրիտին, լատիներենին, բյուզանդական հունարենին, պարսկերենին, վրացերենին, ասորերենին: Կարդում էր ուրարտական և այլ ազգերի սեպագրեր:

Ադոնցի երեք կրթողային աշխատությունները բյուզանդագիտության ու հայագիտության մեջ բերեցին ծանրակշիռ նորություններ: Դրանք են՝ «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» (1908 թ.), «Արուեստ Դիոնիսեայ Քերականի եւ հայ մեկնությունք նորին» (1915 թ.), «Քննական պատմություն Հայոց» (1946 թ.):

Ադոնցը ներկայացրեց, թե որքան մեծ դեր է կատարել ծագումով հայկական Մակեդոնյան հարստությունը իր կառավարման երկու դարի ընթացքում Բյուզանդական կայսրության կյանքում: Այդ ժամանակահատվածում Բյուզանդիան եղել է աշխարհի ամենաքաղաքակիրթ ու հզոր պետությունը: Նա առաջինը Ուրարտուն համարեց Հայաստան: Նա ապացուցեց, որ Բագրատունիների թագավորական գերդաստանն ամենաերկարակյացն է իր տևողությամբ՝ համաշխարհային պատմության մեջ:

Գիտնականը շատ ճշգրտումներ է կատարել բյուզանդագիտության ու հայագիտության մեջ:

Ադոնցը շատ մեծ տեղ է տվել հայ եկեղեցու դերին հայոց պատմության մեջ և այդ հարցին նվիրել է կարևոր հետազոտություններ՝ պնդելով հայ եկեղեցու ազգապահպան դերը բոլոր դարերի համար:

Հայագետը եղել է հայ դատի երդվյալ պաշտպանը և այդ առիթով եվրոպական պարբերականներում գրել է խիստ քննադատական հոդվածներ՝ հօգուտ հայ ազգի պատմական իրավունքների:

Ադոնցի գիտական ժառանգությունը, իր ճշգրիտ գիտական դրույթներով ու փաստերով, ելակետային է հետագա բոլոր բյուզանդագետների ու հայագետների համար:

Անլիլյա Դոլուխանյան – ք. գ. դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայ հին և միջնադարյան գրականության և նրա

⁵⁹ Ի 2 խ ա ն. 1952, 41:

դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ: Գիտական հետաքրքրությունները՝ հին և միջնադարյան հայ գրականություն, բանահյուսություն, ժամանակակից հայ գրականություն, գրականության դասավանդման մեթոդիկա, գրաքննադատություն, հայագիտություն, գրական կապեր: Հեղինակ է 40 գրքի և շուրջ 800 հոդվածի: ORCID:0000-0001-9526-9464.
aelita.dolukhanyan@gmail.com

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբեղյան Մ. 1968, Երկեր, հ. Գ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 694 էջ [Abeghyan M. 1968, Works, V. III. Yerevan, Publishing House of the Academy of Sciences of the ASSR, 694 p. (in Armenian)]:

Ադոնց Ն. 2006, Երկեր հինգ հատորով, հ. Ա, Երևան, ԵՊՀ հրատ., 648 էջ [Adontz N., 2006, Works in five volumes, V. I. Yerevan, YSU Publishing House, 648 p. (in Armenian)]:

Ադոնց Ն. 2006, Երկեր հինգ հատորով, հ. Բ, Երևան, ԵՊՀ հրատ., 674 էջ [Adontz N. 2006, Works in five volumes, V. II. Yerevan, YSU Publishing House, 674 p. (in Armenian)]:

Ադոնց Ն. 2008, Երկեր հինգ հատորով, հ. Գ, Երևան, ԵՊՀ հրատ., 489 էջ [Adontz N. 2008, Works in five volumes, V. III. Yerevan, YSU Publishing House, 489 p. (in Armenian)]:

Ադոնց Ն. 2009, Երկեր հինգ հատորով, հ. Դ, Երևան, ԵՊՀ հրատ., 715 էջ [Adontz N., 2009, Works in five volumes, V. IV. Yerevan, YSU Publishing House, 715 p. (in Armenian)]:

Ադոնց Ն. 2012, Երկեր հինգ հատորով, հ. Ե, Երևան, ԵՊՀ հրատ., 656 էջ [Adontz N. 2012, Works in five volumes, V. V. Yerevan, YSU Publishing House, 656 p. (in Armenian)]:

Ադոնց Ն. 2012, Երկեր, հ. Զ, Լրացուցիչ հատոր, Երևան, ԵՊՀ հրատ., 531 էջ [Adontz N. 2012, Works, V. VI, Additional volume. Yerevan, YSU Publishing House, 531 p. (in Armenian)]:

Ադոնց Ն. 2014, Երկեր, հ. Է, Նամականի, Երևան, ԵՊՀ հրատ., 286 էջ [Adontz N., 2014, Works, V. VII, Collection of letters. Yerevan, YSU Publishing House, 286 p. (in Armenian)]:

Ադոնց Ն. 2016, Երկեր, հ. Ը, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում. քաղաքական կացությունը և նախարարական կարգը, Երևան, ԵՊՀ հրատ., 468 էջ [Adontz N. 2016, Works, V. VIII, Armenia in the Period of Justinian; political situation and ministerial order. Yerevan, YSU Publishing House, 468 p. (in Armenian)]:

Ադոնցյան մտածումներ. 2024, Կազմող Մանավազդ սարկավազ Մկրտչյան, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատ., 87 էջ [Adontz' thoughts (Adontzian Insights). 2024, Compiler Deacon Manavazd Mkrtchyan, Holy Etchmiadzin, Mother See of Holy Etchmiadzin Publishing House, 87 p. (in Armenian)]:

Ակադեմիկոս Նիկողայոս Մառ. 2005, Ծննդյան 140 և մահվան 70-ամյակների տարելիցի ժողովածու, խմբագրությամբ Պ. Մ. Մուրադյանի, Երևան, «Զանգակ-97» հրատ., էջ 147–152 [Academician Nikoghayos Marr. 2005, Collection dedicated to the 140th anniversary of his birth and to the 70th anniversary of

his death, edited by P. M. Muradyan. Yerevan, “Zangak-97” Publishing House, pp. 147–152 (in Armenian)]:

Դոլուխանյան Ա. 2009, Դրվագներ հայ գրաքննադատական մտքի պատմությունից, Երևան, «Զանգակ-97» հրատ., 222 էջ [Dolukhanyan A. 2009, Episodes from the history of the Armenian literary criticism. Yerevan, “Zangak-97” Publishing House, 222 p. (in Armenian)]:

Դոլուխանյան Ա. 2022, Նիկողայոս Ադոնց, Երևան, «Արեգ» հրատ., 159 էջ [Dolukhanyan A. 2022, Nikoghayos Adontz. Yerevan, “Areg” Publishing House, 159 p. (in Armenian)]:

Եղիշե. 1989, Վարդանի և Հայոց պատերազմի մասին, Թարգմանությունը և ծանոթագրությունները Ե. Տեր-Մինասյանի, Երևան, ԵՊՀ հրատ., 447 էջ [Eghishe 1989, About Vardan and the Armenians' War, Translation and annotations by Y. Ter-Minasyan. Yerevan, YSU Publishing House, 447 p. (in Armenian)]:

Իշխան Մ. 1952, Երեք մեծ հայեր, Բեյրութ, տպ., Էտվան, 98 էջ [Ishkhan M., 1952, Three great Armenians. Beirut, “Etván” Publishing House, 98 p. (in Armenian)]:

Իսահակյան Ավ. 2021, Երկերի լիակատար ժողովածու տասնչորս հատորով, Նամակներ (1924–1957), Երևան, «Էդիթ պրինտ» հրատ., 1135 էջ [Isahakyan Av. 2021, Complete collection of works in fourteen volumes, Letters (1924–1957). Yerevan, “Edit Print” Publishing House, 1135 p. (in Armenian)]:

Հասրաթյան Մ. 1985, Պատմա-հնագիտական ուսումնասիրություններ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 277 էջ [Hasratyan M., 1985, Historical and archaeological studies. Yerevan, Publishing House of Academy of Sciences of the ASSR, 277 p. (in Armenian)]:

Ղազար Փարպեցի. 1982, Հայոց պատմություն, Թուրթ Վահան Մամիկոնյանին, Աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Բագրատ Ուլուբաբյանի, Երևան, ԵՊՀ հրատ., 537 էջ [Ghazar Parpetsi 1982, History of Armenia, Letter to Vahan Mamikonyan, Translation into modern Armenian and annotations by Bagrat Ulubabyan. Yerevan, YSU Publishing House, 537 p. (in Armenian)]:

Ղուկաս Սեբաստացի. 1988, Դավիթ Բեկի պատմությունը, Աշխարհաբար վերապատմեց Արշակ Մադոյանը, Երևան, «Արևիկ» հրատ., 43 էջ [Ghukas Sebastatsi. 1988, History of Davit Beck. Retold in Modern Armenian by Arshak Madoyan. Yerevan, “Arevik” Publishing House, 43 p. (in Armenian)]:

Մկրտչյան Աշ. 1968, Հինգերորդ դարի հայ դպրություն, Երևան, «Հայաստան» հրատ., 626 էջ [Mkrtchyan Ash. 1968, Armenian literature in the fifth-century. Yerevan, “Hayastan” Publishing House, 626 p. (in Armenian)]:

Նիկողայոս Ադոնցը միջազգային ճանաչում ունեցող բյուզանդագետ և հայագետ, 2021, Հոգևածների ժողովածու՝ նվիրված Նիկողայոս Ադոնցի ծննդյան 150-ամյա հոբելյանին, Երևան, «Լուսակն» հրատ., 112 էջ [Nichoghayos Adontz is internationally recognized Byzantine scholar and Armenologist. 2021, Collection of articles dedicated to the 150th anniversary of the birth of Nichoghayos Adontz. Yerevan, “Lusakn” Publishing House, 112 p. (in Armenian)]:

Վասիլ Դիգենիս Ակրիտաս. 1978, Թարգմանություն, ուսումնասիրություն, ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 230 էջ [Vasil Digenis Akritas, 1978, Translation, research, and notes by Hrach Bartikyan.

Yerevan, Publishing House of the Academy of Sciences of the ASSR, 230 p. (in Armenian)]:

«Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան. 2002, Երևան, Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, էջ 17–18 ["Christian Armenia" Encyclopedia, 2002. Yerevan, Editorial Board of the Armenian Encyclopedia, pp. 17–18 (in Armenian)]:

Гумилев Л., 2017, Энциклопедия. Москва, Издательство “Художественная литература”, 804 с. [Gumilyov L., 2017, Encyclopedia. Moscow, “Khudojestvennaya Literatura” Publishing House, p. 804 (in Russian)].

Conybeare F., 1913, A catalogue of the Armenian Manuscripts in the British Museum. London, Oxford University Press, 410 p.

Dowsett Ch. 1997, Sayat-Nova, An 18th-century troubadour, A biographical and literary study. Lovanii, print Aedibus Peeters, 505 p.

Lacroze M. 1739, Histoire du christianisme d’Ethiopie et d’Arménie ed. La Veuve Le Vier. Berlin, et Pierre Paupie, 72402 p.

Madame Chantre B. 1893, A travers l’Arménie Russe. Paris, Librairie Hachette. 320 p.

Nouveau Petit Larousse illustré, 1932. Paris, Librairie Larousse. 1760 p.

УНИКАЛЬНЫЙ ВИЗАНТИНИСТ И АРМЕНОВЕД: НИКОЛАЙ АДОНЦ

АЭЛИТА ДОЛУХАНЫ

Резюме

Ключевые слова: Адонц, Марр, византинист, арменовед, Урарту, Тигран Великий, Македонская династия, Петербург, семинария Геворкян, Дионисий Фракийский, Армянский вопрос.

Николай Адонц (1871–1942) являлся византинистом и арменоведом, снискавшим международную славу. Он получил блестящее образование в Татевском монастыре, Эчмиадзинской семинарии Геворкян, в Тифлисе, Петербургском университете, который окончил с золотой медалью.

В 1899–1901 гг. Н. Адонц, благодаря финансовой поддержке Александра Манташянца, стажировался в Лондоне, Париже, Мюнхене, Страсбурге, Венеции, Венском университете, в матенадаранах и библиотеках. Ему выпала честь прослушать курс лекций таких известных ученых, каковыми были Карл Крумбахер, Антуан Мейе, Генрих Хюбшман и др.

Он писал на грабаре (древнеармянском), западноармянском и восточноармянском, русском, французском, английском, немецком языках. Ученый владел санскритом, латинским, византийским греческим (среднегреческим), персидским, грузинским, ассирийским, читал клинопись урартов и других народов.

Три фундаментальных труда Н. Адонца по византистике и арменоведению [«Армения в эпоху Юстиниана» (1908 г.), «Дионисий Фракийский и армянские толкователи» (1915 г.), «Критическая история Армении» (1946 г.)] внесли весомый вклад в эту сферу науки.

Н. Адонц показал, какую роль сыграла армянская Македонская династия на протяжении её двухсотлетнего правления в истории Византийской империи. В этот исторический период Византия являлась самым цивилизованным и могущественным государством в мире. Следует отметить, что ученый первым назвал Урарту Арменией.

Н. Адонц доказал, что царская династия Багратидов была самой долго правившей в мировой истории. Он внес ряд важных уточнений и поправок в византинистику и арменоведение.

Н. Адонц придавал огромное значение роли церкви в армянской истории и посвятил этому вопросу ряд важных исследований, в которых акцентировал ключевую роль церкви в сохранении национальной идентичности народа.

Н. Адонц являлся ревностным защитником Армянского вопроса. В этой связи он выступал в европейской прессе с критическими статьями в защиту армянского народа и его исторических прав.

Научное наследие Н. Адонца, с его выверенными положениями и фактами, является отправной точкой для будущих византинистов и арменоведов.

Аэлита Долуханян – д. филол. н., проф., член-корреспондент НАН РА, зав. кафедрой древнеармянской и средневековой армянской литературы и методики ее преподавания АГПУ им. Х. Абовяна. Научные интересы: древнеармянская и средневековая армянская литература, устное народное творчество, современная армянская литература, методика преподавания литературы, литературная критика, арменоведение, литературные связи. Автор 40 книг и около 800 статей. ORCID: 0000-0001-9526-9464. aelita.dolukhanyan@gmail.com

A UNIQUE BYZANTINIST AND ARMENOLOGIST,
NICHOLAS ADONTZ

AELITA DOLUKHANYAN

Summary

Keywords: Adontz, Marr, Byzantinist, Armenologist, Urartu, Tigran the Great, Macedonian dynasty, St. Petersburg, Gevorkian Seminary, Dionysius Thrax, the Armenian Question.

Nicholas Adontz (1871–1942) was an internationally renowned Byzantinist and Armenologist. He received a brilliant education at the Tatev Monastery, the

Gevorkian Seminary in Etchmiadzin, in Tiflis, and at St. Petersburg University from which he graduated with a gold medal.

From 1899 to 1901, thanks to the financial support of Alexander Mantashyants, N. Adontz completed internship in London, Paris, Munich, Strasbourg, Venice, and at the University of Vienna, working in various matenadarans (manuscript repositories) and libraries. He had the honor of attending lectures by such eminent scholars as Karl Krumbacher, Antoine Meillet, Heinrich Hübschmann and others.

He wrote in Grabar (Classical Armenian), Western Armenian, Eastern Armenian, Russian, French, English, and German. The scholar was proficient in Sanskrit, Latin, Byzantine Greek (Medieval Greek), Persian, Georgian, Assyrian, and could read the cuneiform of the Urartians and other peoples.

Three fundamental works by Adontz on Byzantinology and Armenology [“Armenia in the Period of Justinian” (1908), “Dionysius Thrax and the Armenian Commentators” (1915), “Critical History of Armenia” (1946)] made a significant contribution to this field of science.

N. Adontz demonstrated the role played by the Armenian Macedonian dynasty throughout its two-hundred-year reign in the history of the Byzantine Empire. During this historical period, Byzantium was the most civilized and powerful state in the world. It should be noted that N. Adontz was the first to refer to Urartu as Armenia.

N. Adontz proved that the reign of the Bagratid royal dynasty was the longest in the world history. He introduced a number of important clarifications and amendments to Byzantinology and Armenology.

N. Adontz attached immense importance to the role of the Church in Armenian history and dedicated a number of important studies to this issue, emphasizing the Church's key role in preserving the national identity of the people.

He was a zealous defender of the Armenian Question. In this regard, he published critical articles in the European press in defense of the Armenian people and their historical rights.

The scientific legacy of N. Adontz, with its verified propositions and facts, serves as a starting point for future Byzantinists and Armenologists.

Aelita Dolukhanyan – Doctor of Sciences in Philology, Professor, Correspondent Member of NAS RA, Chairperson of the Department of Ancient and Medieval Armenian Literature and its Teaching Methodology at the ASPU after Kh. Abovyan. Scientific interests: Ancient and Medieval Armenian Literature, folklore, contemporary Armenian Literature, methodology of teaching literature, literary criticism, Armenology, literary ties. Author of 40 books and about 800 articles. ORCID: 0000-0001-9526-9464. aelita.dolukhanyan@gmail.com